



REV. FR. UNTZAG NALBANDIAN
ARMENIAN CHURCH OF
THE HOLY ASCENSION

1460 Huntington Turnpike
Trumbull, Conn. 06611
Tel: 203/372/5770

ՄԲ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

Տ. ԸՆՁԱԿ ՔԷՆՑ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ, Հովիտ

Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմին
Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ.Թորգոմ
Արք. Մանուկեանին - Նիւ Եորք

Փետր. 12, 1990

Գերաշնորհ Սրբազան Հայր,

1989 թուականը Կրօնական, մշակութային, ընկերային ու
հաստիքաբեր ձեռնարկներով լի տարի մը եղաւ մեր ծուխին համար:

Անցնող տարուան ընթացքին մեր Եկեղեցին ունէր 110
տրատու անդամներ: Մեր Հայ ու Կիրակնօրեայ վարժարաններուն մէջ ունէինք 35
արձանագրուած աշակերտներ: Զոյգ դպրոցները ունէին մօտ 15 ուսուցիչ-ուսուցչու-
հիներ, բոլորն ալ կամաւոր:

Պահոց շրջանին ունեցանք Սուրբ Գրքի սերտողութիւն
ու շինիչ իօսակցութիւն Հայ Եկեղեցւոյ ու մշակոյթի մասին: Մասնաւոր աշխատանք
տարուեցաւ վերակազմակերպելու Երիտասարդաց Կազմակերպութիւնները: Մեր պատա-
նիները ամիսը մէկ անգամ մաս կազմեցին Դպրաց Դասին, շապիկ հագնելով:

Տասը Սրբանկարներով զարդարեցինք մեր Եկեղեցւոյ
աջ ու ահեակ պատերը: Համայնքս անհամբեր կը սպասէ անոնց օժման, որը տեղի
պիտի ունենայ յառաջիկայ Յունիս 3-ին, Ձերդ Սրբազնութեան ձեռօք:

Հովուական այցելութիւններս անպակաս էին: Ժերոց եւ
հիւանդաց կանոնաւորապէս այցելեցի ու մխիթարեցի: Ժխական թերթիկս ժամանակին
հրատարակեցի լի՝ դաստիարակչական գրութիւններով:

Միշտ շփման մէջ մնացի շրջանիս օտար եկեղեցականներուն
հետ ու յաճախեցի իրենց ունեցած ժողովներուն ու դաստիարակչական հաւաքներուն:

Հայաստանի երկրաշարժէն անմիջապէս վերջ, մասնաւոր
յանձնախումբ մը կազմեցի զբաղելու համար դրամահաւաքով: Բոլորն ալ Հայու
սրբանչելի հոգիով գործեցին ու կարողացան 115 հազար տոլարի պատկառելի գումար
մը Առաջնորդարան փոխանցել յօգուտ՝ աղէտեալներուն:

Յոյսով ենք, որ 1990 թուականը աւելի աշխոյժ տարի մը
պիտի լինի մեր փոքրաթիւ համայնքին համար:

Մնամ Թեմիդ Խոնարհ Ժառանգ
Տ. Քարոյի Բեյ Նալպանտեան
Ընծակ Քինյ. Նալպանտեան